

* * *

Գարուն է նորէն, ու սիրտըս հիմա
Թեւեր է առեւ.
(ԱՇԽ, սիրտը Գարուն՝ խելօն կը կենա՞յ),
Ճին օրերուն պէս, կախուեր է վիզէս,
Ինձի հիս կ'ուզէ լիռները ճախրել:

Սիրտ իմ, դուն զընա՛,
Զիս մի համոզեր.
Զեմ կրտսար ա՛լ ես, հին օրերուն պէս,
Ետեւէդ վազել:

Հ Ա Ռ Ե Ա Կ Ա Ն Չ Պ

Աժխարհը տանար է անսահման,
Ես անոր բանաւոր խընկաման.
Ոչ ըսկիզբ ունիմ ես եւ ոչ վերջ,
Մըխացեր եմ, անվերջ պիս' մըխամ:

Կըսեն թէ ցաւէն մաշա՛ծ է, հալա՛ծ,
Որ երբեմն ցաւ էր «Երանի» առած.
Ու կը հարցընեմ ես ինձի հիմա,
Ո՞վ աշխարհ եկեր՝ զացեր է չայրած:

Մ. ՄՈՆՈԽԵԱՆ

